ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Քա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր

ք. Երևան «23» մարտի 2021թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 02-Ա[1]

ՍՄԲԱՏ ՀԱԿՈԲԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի «Քաղաքացիական ծառայողի փորձաշրջանի հետ կապված առանձնահատկությունները սահմանելու մասին» N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ և 8-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական փորձաքննության կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 18-1-27.2-Մ2-2) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի եզրակացությունը և Սմբատ Հակոբյանի անձնական դիմումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Սմբատ Հակոբի Հակոբյանին 2021 թվականի մարտի 24-ից ինն ամիս փորձաշրջանով նշանակել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական փորձաքննության կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 18-1-27.2-Մ2-2) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնում:

2. Փորձաշրջանի համակարգող նշանակել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական փորձաքննության կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ Նաիրա Ղազարյանին:

3. Ս. Հակոբյանի ամսական աշխատավարձի չափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ